Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն – 59

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Թ. Շահվերդյանը, Շ. Վահանյանը, Մ. Մաթևոսյանը, Ա. Բաղդասարյանը, Տ. Հակոբյանը, Ռ. Տոնոյանը, Տ. Գալստյանը, Բ. Հարությունյանը, Ա. Հունանյանը, Ա. Խաչատրյանը, Ն. Արսենյանը, Մ. Մկրտչյանը, Բ. Վարդանյանը, Գ. Սուքիասյանը, Ա. Ձաքարյանը, Կ. Առաքելյանը, Կ. Շահազիզյանը, Ա. Շմավոնյանը:

Նիստին մասնակցում էին նաև աշխատակազմի բաժինների պետեր:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

3. Մեկ անձից գնման ընթացակարգով գնում կատարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

4. Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները նոր խմբագրությամբ հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

14 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Բաղդասարյանը, Տ. Գալստյանը, Ա. Խաչատրյանը և Կ. Շահազիզյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, հիմք ընդունելով 2025թ. բյուջեով չկանխատեսված ծախսերի կամ նախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորման անհրաժեշտությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 90-րդ հոդվածի 1-ին, 4-րդ մասերի, «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերի պահանջներով, համաձայնություն տալ Աշտարակ համայնքի 2025թ. տարեկան բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի միջոցներից 1 միլիարդ 250 մլն դրամի չափով, ըստ անհրաժեշտության, ուղղել վարչական և ֆոնդային բյուջե՝ տարբեր բնագավառներում առաջացած ծախսերի ֆինանսավորման համար:

Սույն որոշումից բխող հետագա իրավական ակտերի ընդունումը վերապահել Աշտարակ համայնքի ղեկավարին:

15 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Բաղդասարյանը, Տ. Գալստյանը և Կ. Շահազիզյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 3 - *Մեկ անձից գնման ընթացակարգով գնում կատարելու թույլտվություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, հաշվի առնելով հարցի հրատապությունը, ինչպես նաև հիմք ընդունելով քաղաքացիների դիմումներն ու բնակավայրերի վարչական ղեկավարների զեկուցագրերը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման պահանջներով, Աշտարակ համայնքի կարիքների համար Ագարակ, Օշական, Բյուրական, Կոշ, Ոսկեվազ բնակավայրերում փողոցների ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման ընթացակարգը համարել անհետաձգելի պահանջ և թույլատրել իրականացնելու մեկ անձից գնման

ընթացակարգով՝ համաձայն կից ներկայացվող նախահաշվի: Աշտարակ համայնքի կարիքների համար Աշտարակ, Ղազարավան, Օհանավան, Բազմաղբյուր, Փարպի, Կարբի բնակավայրերում ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման ընթացակարգը համարել անհետաձգելի պահանջ և թույլատրել իրականացնելու մեկ անձից գնման ընթացակարգով՝ համաձայն կից ներկայացվող նախահաշվի:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 4</u> - Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները նոր խմբագրությամբ հաստատելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 22.08.2024թ. N 1329-Ն որոշման պահանջներով, Աշտարակի համայնքապետարանի ենթակայության Աշտարակ քաղաքի թիվ 4 «Հասմիկ» մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխել՝ «Աշտարակ համայնքի թիվ 4 Հասմիկ մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19 հավելվածների:

Հանձնարարել համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին՝ ապահովել կանոնադրությունների փոփոխությունների պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2025 թվականի դեկտեմբերի 5-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ	_____
ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ	_____
ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ	_____
ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ	_____
ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ	_____
ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ	_____
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	_____
ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	_____
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	_____
ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ	_____
ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ	_____
ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ	_____
ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ	_____
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ	_____
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	_____
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ	_____
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ	_____
ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ	_____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն**

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ